ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԵՎ ՀՐԱՀԱՆԳ

Ողջ Հայությանը ծանոթ իրողություն է, որ այս օրերին լրանում է Արցախի ազգային-ազատագրական պայքարի 10-ամյակը:

Անցնող տասը տարիները մեր ժողովրդի համար եղան ինքնամաքրումի, բյուրեղացման, ինքնանկախ ապրելու կամքի և ազգային արժեքների վերագտման սքանչելի առիթներ եւ հանգրվաններ: Արցախի բարձունքներից հնչած ձայնը մեր ողջ ժողովրդի զավակների համար դարձավ ազգային արդար գատի պաշտպանությանը հանձնառու դառնալու՝ մի սքանչելի առիթ և մղում:

Այս ընթացքում մեր ժողովրդի հազարավոր զավակներ իրենց կյանքը նվիրեցին այս պայքարի բովում և դարձան հավիտենական լուսատու աստղերը մեր պատմության:

Մեր եկեղեցին ի սկզբանե զորավիգ կանգնեց ազգային-ազատագրական այս արդար գոյամարտին:

Արցախի ազգային-ազատագրական պայքարի 10-ամյակը արժանավորապես նշելու և ոգեկոչելու համար սույն Հայրապետական Շրջաբերականով հրահանգում ենք բոլոր թեմակալ առաջնորդներին և հոգևոր հովիվներին՝ ս. թ. փետրվարի 22-ին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բոլոր տաճարներում մատուցել Գոհաբանական Ս. Պատարագ, կատարել Հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ բոլոր զոհված նահատակների հոգու խաղաղության համար, և հատուկ քարոզությամբ առավել ևս գոտեպնդել մեր ժողովրդի կամքն ու նվիրումը հանուն խաղաղության և արդարության վերջնական հաստատման Արցախի մեր հայ ժողովրդի կյանքում:

Թող Ամենակարողն Աստված Իր ամենազոր Աչը տարածի մեր Հայրենիքի և ժողովրդի վրա այժմ և հավիտյանս. Ամեն:

Աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

16 Փետրվարի 1998
Ս. Էջմիածին